ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝

ՏՆՕՐԵՆ՝ _____

«____» _____ 2022 թ.

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է՝

ՄԿԱ՝ _____

«01» «09» 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ Գ.ՓԱՐԱՔԱՐ

«ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

ՍԻՍՏԵՄԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ, ԿՈՒՍԱԿԱՆ

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄԽՈՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԽԱՉԱՏՈՒՐԻ

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ՄԱՅԻՍԻ ՀԻՆԳԵՐՈՐԴԻՆ

« 2022- 2023 » ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐ ՏԱՐԻ

1.ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը.

12-րդ դասարանում սովորում է 25 (քսանհինգ) աշակերտ, որոնցից 9 (ինը) աղջիկ, 15 (տասնհինգը) տղա։Աշակերտները պատրաստակամ են, կազմակերպված, տղաները թերանում են ուսման մեջ։Նրանք բոլորը ունեն լսելու,ընկալելու, փոխըմբռնման կարողություն։Դասարանում առողջ մթնոլորտ է, աշակերտները սիրով և նվիրվածությամբ են պարուրում միմյանց։

2.Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում.

1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում։
2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ընդգծող հոգեբանամանկավարժական միջավայրի ապահովում։
3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում։
4.Պաշտպանել սովորողների իրավունքները։
5.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում։
6.Սովորողների մոտ ձևավորել արժեհամակարգը։
7.Սովորողների ստեղծագործական գործունեության կազմակերպում։

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
3.1 Հոգևոր դաստիարակություն.

Այցելություններ թանգարաններ, եկեղեցիներ, այլ վայրեր ։Անցկացնել զրույց, բանավեճ, կինոդիտում,որպեսզի աշակերտները առավել գիտակից վերաբերմունք ցուցաբերեն հոգևոր արժեքներին։

3.2 Գեղագիտական դաստիարակություն.

Գեղեցիկի հետ առնչվելու և հոգևոր մշակույթում զբաղվելու իրավունքը՝ դաստիարակության կարևորոգույն տարրերից մեկն է։Գեղագիտական դաստիարակությունը սովորողներ և մանկավարժների համատեղ գործունեության գործընթաց է դպրոցականների էսթետիկական մշակույթի ձևավորման ուղղությամբ։

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

Ռազմա-հայրենասիրական դաստիարակությունը բազմաշերտ,նպատակաուղղված, անընդմեջ համակարգված գործընթաց է՝ ուղղված մատաղ սերնդի հայրենասիրական, քաղաքացիական պարտքի, հայրենիքին նվիրվածության հավատարմության դաստիարակմանը։

3.4 Ֆիզիկական դաստիարակություն.

Ֆիզիկական դաստիարակությունը բնակչության առողջության ամրապնդմանը, աշխատունակության բարձրացմանը և երկարակեցությանը,ֆիզիկապես կախված և բարոյապես կայուն սերնդի ձևավորման ուղղված կազմակերպված գործընթաց է։

3.5 Աշխատանքային դաստիարակություն.

Աշխատանքային դաստիարակությունը բազմակողմանի գործընթաց է՝ուղղված երեխայի մոտ աշխատանքի նկատմամբ հայացքներ, գաղափարներ, աշխատասիրություն դաստիարակելուն,աշխատասիրության կարողություններ ձևավորելուն,զարգացնելուն։

3.6 Բնապահպանական դաստիարակություն.

Բնապահպանական դաստիարակությունը էոլոգիական մշակույթի հիմքն է՝ անբաժանելի մասը։Շրջակա միջավայրի նկատմամբ բարոյագիտակցական վերաբերմունքի մակարդակի բարձրացմանը նպատակաուղղված,անընդմեջ համակարգված գործընթաց, որը հնարավորություններ է տալիս ձեռք բերել գիտելիքներ։

4. Դպրոց ընտանիք կապը.

Այն պետք է սերտ ու փոխըմբռնման մթնոլորտում ձևավորվի։Քանզի դպրոցն է այն հիմնասյունը, որ կրթում դաստիարակում է մատաղ սերնդին և ընտանիքն է, որ կանգուն պետք է պահի ապագա առողջ քաղաքացու զարգացումը և հետագա առաջընթացը։

«ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ» ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ,ՇԱԲԱԹՎԱ ՕՐԸ, ԺԱՄԸ

Հ/Հ	Անցկացման օր	Բովանդակություն	Ծանոթություն
1	07-09-2022թ.	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում,առաջարկությունների արկղիկի պատրաստում:	
2	14-09-2022թ.	Հայրենիք, ազգ, մայրենի լեզու: Ինչքանո՞վ ենք յուրաքանչյուրս պատրաստ պահպանելու մեր ազգային որակները:	
3	28-09-2022թ.	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:	
4	05-10-2022թ.	Հավատ, գաղափարախոսություն, պատմություն և ժամանակ:	
5	12-10-2022թ.	Համավարակի կանոնների պահպանումը:	
6	19-10-2022թ.	Աշխարհընկալում: Ես հարգում եմ նաև քո կարծիքը: Փոխըմբռնում:	
7	02-11-2022թ.	Նյութապաշտություն և շահ: Անշահախնդիր նվիրում:	
8	09-11-2022թ.	Ճակատագի՞ր, թե սեփական բախտի տնօրինում:	
9	16-11-2022թ.	Հոգու կրթություն:	
10	23-11-2022թ.	Հոգու կրթություն և մտքի թռիչք:	
11	30-11-2022թ.	Ոսկե աշնան գույներն իմ խոհերում:	
12	07-12-2022թ.	Հայաստանի հուշարձանները:Հուշարձանները որպես Հայաստանի պատմամշակութային ժառանգություն:	
13	04-12-2022թ.	Զրույց՝ ,,Արվեստն ունի թշնամի:Նրա անունն է տգիտություն,,թեմայով:	
14	21-12-2022թ.	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:	
15	11.01.2022թ.	Առաջին կիսամյակի ուսումնական արդյունքների վերանայում:	
16	18.01.2022թ.	Առաջին կիսամյակի ամփոփում:	
17	25.01.2023թ.	Զրույց՝«Արտագաղթը ամենամեծ չարիքն է» թեմայով:	
18	01.02.2023թ.	Ի՞նչ թ պետք հզոր հայրենիք ստեղծելու համար:	
19	08.02.2023թ.	Զրույց՝«Ես պարտավոր եմ հայ հերոսների ժառանգած հայրենիքը դարձնել հզոր ու անպարտելի» թեմայով:	
20	15.02.2023թ.	Միասնությունը տանում է դեպի ամուր ընտանիք ու հզոր հայրենիք:	
21	22.02.2023թ.	Հ.Թումանյանին նվիրված զրույց:	
22	01.03.2023թ.	Զրույց՝«Հիշենք մեր մեծերին» թեմայով:	
23	15.03.2023թ.	Զրույց՝«Անաղարտ պահենք մայրենին» թեմայով:	
24	22.03.2023թ.	Հայոց ցեղասպանություն:Հույս և հավատ սեփական ուժերի հանդեպ:	
25	05.04.2023թ.	Հանճարները սիրո մասին:	
26	12.04.2023թ.	Զրույց՝«Սերը ոգեշնչման աղբյուր» թեմայով:	
27	19.04.2023թ.	Քաղպաշտպանության միջազգային օր:	
28	26.04.2023թ.	Զրույց՝«Խիղճ» :Ամենաանաչառ և խիստ դատավորը բոլորիս համար:	
29	03.05.2023թ.	Երբ մեղավոր է «Ներողությունը» բարձրացնում է անձը և ոչ թե նվաստացնում:	
30	10.05.2023թ.	Զրույց՝«Հերոսապատում» թեմայով:	
31	17.05.2023թ.	Զրույց՝«Հաղթանակների ամիս» թեմայով:	
32	24.05.2023թ.	Ամփոփիչ վերջին դաս:	